



ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՅՈՒԹՅԱՆ  
Հատոր 2, համար 2, 2008թ.



www.ysmu.am

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՏՈՒԼԻՉՍԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԵԱՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Դավիդյանց Մ.Վ., Էգրա Բարգիլայ, Նիազյան Լ.Գ.**

Երևանի Միխիթար Հերացու անվ. բժշկական համալսարան, Երևան Հայաստան  
ԱՄՆ հիվանդությունների վերահսկողության և կանխարգելման կենտրոն, ԱՄՆ  
ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան

Ci. botulinum-ի կողմից արտադրվող թույլը սուր նեյրոպարալիտիկ հիվանդության առաջացման պատճառ է դառնում, որը կարող է նույնիսկ ունենալ մահվան ելք: Քանի որ կլինիկական ախտանշանները լավ նկարագրված են, քչերին է հայտնի բոտուլիզմի հետևանքով առաջացած հեռավոր հետևանքների մասին: Հիվանդությունից մեկ տարի անց իրականացված բոտուլիզմի 34 դեպքերի հետազոտությունը, կապված շնչառական բարդությունների հետ, ցույց է տվել, որ հիվանդների 68% տառապում են թեթև հոգնածությունից, իսկ 46% տառապում են արտահայտված շնչառական խանգարումից (դիսպնոե):

Քանի որ Հայաստանը համարվում է բոտուլիզմի ամենամեծ դեպքեր ունեցող երկրներից մեկը, հիվանդների ուսումնասիրությունը այս տարածաշրջանում կարող է ծառայել արժեքավոր ինֆորմացիայի աղբյուր՝ բոտուլիզմի հետ կապված հեռավոր հետևանքների հետազոտման նպատակով:

Հիվանդության բացի հեռավոր հետևանքների հայտնաբերման նպատակից, զուգահեռ հետապնդվելու է նաև երկրորդ կարևորագույն նպատակը՝ Հայաստանում բոտուլիզմի հետ կապված ռիսկի գործոնների ուսումնասիրությունը (այն կոչվելու է՝ «Ռիսկի գործոնների ուսումնասիրություն»): Հիշյալ հետազոտության արդյունքում կսահմանվեն բոտուլիզմի թունավորման հետ կապված ռիսկի գործոնները, որի հիման վրա կմշակվի հասարակությանն ուղղված «ՀՂՈՒՄ» Հայաստանում բոտուլիզմի կանխարգելման նպատակով:

ՀՀ ԱՆ Ազգային առողջապահության ինստիտուտը համագործակցելով ԱՄՆ-ի հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի (CDC, Atlanta) հետ, իրականացնում է 3-ամյա գիտական ծրագիր՝ բոտուլիզմի ախտորոշման և վերահսկման բարելավման նպատակով: